ներ տարածել ֆիլօկսերայի մասին։ Եթէ ֆիլօկսերայի դէմը չ'առնւի, կարճ միջոցում մի երկրի գրեթէ ամբողջ այգեգործութիւնը, վազապահութիւնը կը ջնջւի։ Բրօշիւրի յատուկ նպատակն է՝ տարածել ժողովրդի մէջ Կովկասեան Գիւղատնտեսական Ընկերութեան հետեւեալ առաջարկութիւնները՝ „1—Եւրոպայից, Ղրիմից և այլ վարակւած տեղերից, ինչպիսիններն են Սուխումի բաժինը և Քութայիսի նահանգը, այլ ևս չը բերել մեր կողմերը վազեր, պատւաստներ և զանազան արմտիք։ (Մեր կողմերը ասելով, հեղինակը ուզում է ասել՝ Շամախու, Գանձակի, Դերբենդի, Երևանի և Նախիջևանի կողմերը, ուր ֆիլօկսերա դեռ ևս չի երևացել)։ 2—Խիստ հետևել և հսկել, որ գաղտնի կերպով չ'անցկացնեն վազեր և առհասարակ բոյսեր։ 3—Առանձին հոգատարութիւն դարձնել այն այգիների վերայ, որտեղ Եւրոպայից և այլ վարակւած տեղերից վազեր կամ բոյսեր են ստացւած. իսկ այդ տեսակ այգիների մասին Գիւղատնտեսական Ընկերութիւնը յատուկ խընդրում է, որ հաղորդեն թէ՝ ե՞րբ և ո՞ր տեղերից ի՞նչ տեսակ վազեր են բերւած և թէ արդեօք այդ այգիներում փոփոխութիւն չէ՞ նկատւում, կամ եթէ ֆիլօկսերայի վարակման արտաքին նշանները (օրինակ, տերևների դեղնելը, կարճանալը և կենդրոն կազմելը) նկատւեն՝ իսկոյն իմաց տան տեղական գաւառապետին և Գիւղատնտեսական Ընկերութեան, որ դորա դէմ իսկոյն միջոցներ ձեռք առնեն։ Եթէ հիւանդութիւնը դեռ նոր է սկսւած և փոքր տարածութեան վերայ է, առաջն առնելը այնքան դժւար չէ և տէրութիւնը յանձն է առնում"։

Ա. Ա.

---

## ՆՈՐ ՍՏԱՑՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) Հաշիւ Բագուայ Հայոց ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ վասն 1889 ամի։ Բագու, տպ. Ս. Տէր-Յովհաննիսեանի, 1890 թ.։

2) Положенie о состоящ. подъ покров. Его Имп. Выс. Гос. Наслѣдника Цесаревича, Казанской Научно-Промышленной выставкѣ, 1890 г. произведенiй Волжско-Камскаго края и Востока Россiи, утвержденное г. Министромъ Финансовъ 30-го мая 1889 г. Казань. тип. А. Родiанова, 1890 г.

3) Программа историко-этногр. отдѣла Казанской Научно-Промышл. выставки, 1889 г.

4) Программа фабрично-заводскаго отдѣла Казанской Научно-Промышл. выставки 1880 г. Казань. тип. Казанск. Биржев. Листка, 1890 г.

5) Программа кустарнаго отдѣла Казанской Научно-Промышл. выст. 1890 г. Казань, 1889 г., типогр. Казанск. Бирж. Листка.

6) Երկամեայ տեղեկագիր Իգդիրի Ազգային Տնտեսական խորհրդոյ 1887—1889 թ.։ Իգդիր, 1890 թ., տպարան Մամուրեանի։

7) Բագուայ Հայոց Մարդասիրական Ընկերութեան տարեկան հաշիւը 1889 թ.։ Բագու 1890 թ.։

---